

Կոնտակտով փոխանցումներ Ուղեցույց



Կոնտակտով / հեռախոսահամարով, Էլ. հասցեով / փոխանցումներ

Acba digital-ի օգտատերերը այսուհետ հնարավորություն կունենան կատարել փոխանցում Բանկի մեկ այլ հաճախորդի՝ ընդամենը հեռախոսահամարով կամ Էլ. հասցեով: Օգտատերը հեռախոսահամարը կամ Էլ. հասցեն կարող է

- մուտքագրել ձեռքով
- ընտրել հեռախոսագրքից
- ընտրել acba contacts-ից:

!!!

Հեռախոսահամարի կամ Էլ. հասցեի որոնումից հետո համակարգը փնտրելու է տվյալ հեռախոսահամարով Բանկում գրանցված հաճախորդի: Եթե տվյալ համարով հաճախորդ չի գտնվել կամ գտնվել է մեկից ավել հաճախորդ, ապա որոնումը կմերժվի: Հաջող որոնման դեպքում օգտատիրոջը կցուցադրվի ստացողի անուն ազգանվան կրճատ տարբերակը:

!!!

!!!

Ստացողի մուտքագրվող հաշիվն ընտրվում է հետևյալ տրամաբանությամբ՝

Սկզբնապես ընտրվում է **AMD արժույթով քարտը**՝

- Եթե հաճախորդն ունի 1-ից ավելի դրամային քարտ, ապա ընտրվում է այն քարտային հաշիվը, որը Բանկում ունի ամենափոքր կանխիկացման տոկոսադրույքը,
- Եթե քարտերի կանխիկացման տոկոսադրույքները համընկնում են, ապա հիմնական քարտային հաշիվ ընտրվում է ամենաուշ վերջնաժամկետ ունեցող դրամային քարտը,
- Եթե քարտերի վերջնաժամկետները նույնպես համընկնում են, ապա հիմնական քարտ է ընտրվում այդ դրամային քարտերից կամայականը:

Եթե հաճախորդը չունի AMD արժույթով քարտ, ապա ընտրվում է հաճախորդի **դրամային հաշիվը**՝

- Սկզբնապես ընտրվում է AMD արժույթով հաշիվը (սահմանափակ հասանելիություններով հաճախորդների համար Սահմանափակ հաշիվը),
- Եթե հաճախորդն ունի 1-ից ավել դրամային հաշիվ, ապա ընտրվում է բացման ամսաթվով ավելի վաղ բացված հաշիվը:

!!!

Կոնտակտով փոխանցումներ




Կոնտակտով փոխանցում կատարելու համար անհրաժեշտ է հավելվածի առաջին էջից ընտրել acba share կոճակը:

1



2

Acba share բաժնից անհրաժեշտ է ընտրել «Կոնտակտով փոխանցում» կոճակը:




Նոր բացվող էջում կարող եք լրացնել ստացողի հեռախոսահամարը/էլ. հասցեն, կամ դրանք ընտրել հեռախոսագրքից կամ acba contacts-ից:

3



Չեռախոսահամարը/Էլ. հասցեն լրացնելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Որոնել» կոճակը:

4



Որոնման արդյունքները կցուցադրվեն ոչ լիարժեք տեսքով: Համոզվելուց հետո, որ որոնման արդյունքում գտնվել է ցանկալի անձը, անհրաժեշտ է սեղմել «Հաստատել»

5



Հաստատումից հետո արդեն կբացվի գործարքի տվյալների մուտքագրման էջը: Գործարքը հաստատելուց հետո այն կկատարվի վայրկայնների ընթացքում և գումարը հասանելի կդառնա ստացողի հաշվին:

6



Պրոդուկտի կարգավորում



Կոնտակտով փոխանցումներ ստանալու դեպքում acba digital համակարգի Պրոդուկտի կարգավորում բաժնից հնարավոր է փոփոխել մուտքագրվող հաշիվը, ապակտիվացնել կամ կրկին ակտիվացնել ծառայությունը:

